



ԱՊԱՐԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

25.08.14թ.

Հասցե. ՀՀ Արագածոտնի մարզ 3103,
ք.Ապարան, Բաղրամյան 26
Հեռ./ֆաքս +/ 0252/ 6 23 60
Էլ.փոստ aarhusaparan@mail.ru
info_aparan@aarhus.am

Բնապահպանության նախարար
Արամայիս Գրիգորյանին

Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝
Նատալյա Մանուկյանից

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի՛ պարոն նախարար.

Ապարանի Օրհուս կենտրոնի կողմից 25.07.14թ. ՀՀ բնապահպանության նախարարությանը հարցում է ուղղվել Թուխմանուկի հանքավայրի երրորդ պոչամբարի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերջին նախագծի վերաբերյալ, սակայն պատասխան չի ստացվել, այդ պատճառով

և մեկ անգամ դիմում եմ Ձեզ, խնդրելով Ապարանի Օրհուս կենտրոնին տրամադրել 25.07.14թ. հարցման / պատճենը կցվում է/ մեջ նշված պաշտոնական տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Ինչպիսի՞ փորձագիտական եզրակացություն է ստացել Արագածոտնի մարզի Թուխմանուկի հանքավայրի երրորդ պոչամբարի վերաբերյալ ներկայացված՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերջին նախագիծը.
2. պետական ո՞ր գերատեսչություններն են փորձաքննության ներկայացված պոչամբարի վերջին նախագծի վրաբերյալ մասնագիտական կարծիքներ կամ եզրակացություններ ներկայացրել.
3. Խնդրում ենք տրամադրել պոչամբարի վերջին նախագծի փորձագիտական եզրակացության, նախագծի մասնագիտական կարծիքների կամ եզրակացությունների, ինչպես նաև ազդակիր համայնքի կարծիքների կամ դիտողությունների, պահանջների ու առաջարկությունների վերաբերող փաստաթղթերի պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ):

Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝ Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝

Նատալյա Մանուկյան

**0010, Հայաստանի Հանրապետություն,
ք.Երևան
Հանրապետության հրապարակ,
Կառավարության 3-րդ տուն**

**Բնապահպանության նախարար
Արամայիս Գրիգորյանին**

**ՀՀ Արագածոտնի մարզ 3103,
ք.Ապարան, Բաղրամյան 26
Քաղաքապետարանի վարչական շենք,**

**Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝
Նատալյա Մանուկյան**